Հավելված 1
Գորիսի պետական համալսարանի
Գիտական խորհրդի 26.11.2019թ.
թիվ 6 նիստի արձանագրային որոշման

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գորիսի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) հետազոտության զարգացման 2019-2023 թվականների գերակայությունները (այսուհետ՝ Գերակայություններ) սահմանում են գիտահետազոտական գործունեության բնագավառում հիմնական ուղղությունները, նպատակները և դրանց իրականացման մեխանիզմները:
2. Համալսարանն իր Գերակայությունները սահմանելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով (2019-2023թթ.), Համալսարանի կառավարման մարմինների որոշումներով, ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին» N 1558-Ն որոշմամբ, ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությամբ:

II. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գորիսի պետական համալսարանում հետազոտության առկա վիճակի, գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վերլուծությունը երկու գերակայության ձևակերպման հիմք է հանդիսացել՝

1) հայագիտական հետազոտություններ,
2) բնագիտական հետազոտություններ:

1.Հայագիտական հետազոտություններ: Հայագիտական հետազոտություններ գերակայությունը Գորիսի պետական համալսարանում առանձնանում է այդ ուղղությամբ իրականացված հետազոտությունների ծավալով, բարձր որակավորում ունեցող գիտական ներուժի, համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ և համագործակցության որոշակի մակարդակով: Այս ուղղությամբ իրականացվող գիտական հետազոտությունների զգալի մասը համապատասխանում

է ակադեմիական չափանիշներին, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ոլորտում ընդգրկված են հայագիտության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են Սյունիքի նոր և նորագույն պատմության, ազգագրության, հնագիտության, գրականության, բանահյուսության ուսումնասիրություններ, մասնավորապես Սյունիքի պետականության, մշակույթի, արդի խոսվածքների, հայ ընտանիքի հիմնախնդիրները թեմաներով, որոնց մի մասը համալսարանում, սկսած 2010թ.-ից, արդյունավետ կերպով ուսումնասիրվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող <<Սյունիքի նյութական և հոգևոր (ոչ նյութական) ժառանգությունը>> թեմայով գիտական ծրագրի շրջանակներում,
- հանրապետությունում սահմանված են այս ուղղությամբ գերակայությունները:

2.Բնագիտական հետազոտություններ: Ժամանակակից բնագիտական հետազոտություններն իրենց բնույթով բազմակողմանի են, իսկ արդյունքները՝ կիրառելի ինչպես գիտության տարբեր բնագավառներում, այնպես էլ ուսումնառության նպատակների ու տնտեսական մակարդակի բարձրացման մեջ: Միևնույն ժամանակ, գիտական և հասարակական մեծ ուշադրության են արժանանում այդ ուղղությամբ իրականացվող այնպիսի հետազոտությունները, որոնք նպատակ ունեն ապահովելու կոմպոզիտ նյութերից պատրաստված կառուցվածքների երկարակեցություն և հուսալիություն, ուսումնասիրելու բազմօղակ մանիպուլյացիոն ռոբոտների և թռչող սարքերի մաթեմատիկական մոդելավորման, շարժումների ղեկավարման ու կայունության հարցեր, ստեղծելու հիվանդությունների դեմ պայքարելու նոր եղանակներ, ինչի պատճառով էլ դրանք նաև այն բնագավառներն են, որտեղ կատարվում են մեծ ֆինանսական ներդրումներ:

Գերակայության շրջանակներում հետազոտություններն իրականացվելու են գիտահետազոտական կարևորությամբ և արդիականությամբ աչքի ընկած հետևյալ երեք ենթաուղղություններով.

Ա) Համակարգերի մաթեմատիկական մոդելավորման, ղեկավարման և փոխազդեցության դինամիկական հարցերի հետազոտություններ,

Բ)Դեղաբույսերից ստացված թուրմերի հակաօքսիդիչ-հակառադիկալային հետազոտություններ,

Գ) Ջրային էկոհամակարգերի որակի գնահատման հետազոտություններ;

Բնագիտական հետազոտություններ գերակայությունն առանձնանում է Գորիսի պետական համալսարանում բարձր որակավորում ունեցող գիտական ներուժի, համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ և համագործակցության որոշակի մակարդակով: Այս ուղղությամբ իրականացվող գիտական հետազոտությունների զգալի մասը համապատասխանում է ակադեմիական չափանիշներին, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ոլորտում ընդգրկված են գիտության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են կիրառական մաթեմատիկան և մեխանիկան, ֆիզիկական քիմիան, կենսաբանությունը և էկոլոգիան, որոնց մի մասը համալսարանում ունեն գիտական դպրոցների նախատիպեր ու ավանդույթներ,
- հանրապետությունում սահմանված են այս ուղղությամբ գերակայությունները:

III.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության զարգացման գերակայությունների սահմանումը հնարավորություն կտա՝

1) Մշակել և սահմանել համալսարանի հետազոտության ոլորտի հստակ սահմանված գերակայություններն ու առաջնահերթությունները՝ շեշտադրելով տարածաշրջանի կարիքները և կարևորելով հետազոտության արդյունքների հնարավոր ապրանքայնացումը:

2) Մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ, առաջընթացը չափագրող մեխանիզմներ և ցուցանիշներ:

3) Գիտահետազոտական ոլորտի համար իրականացնել ֆինանսական պլանավորում և հատկացնել բավարար միջոցներ՝ գիտական աշխատանք կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

4) Մշակել հետազոտական գործունեության կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր՝ ապահովելով ռազմավարական ծրագրում սահմանված գիտահետազոտական առաջնահերթությունների հետ փոխախկապակցվածությունը:

5) Մշակել միջառարկայական հետազոտությունների խրախուսման մեխանիզմներ:

6) Ներդնել հետազոտությունների առևտրայնացման հստակ մեխանիզմներ և իրականացնել քայլեր՝ ուղղված հետազոտությունը որպես համալսարանի եկամտի աղբյուր դարձնելուն:

7) Մշակել ուսանողների և դասախոսների հետազոտական գործընթացներում ներգրավման խրախուսման հստակ մեխանիզմներ՝ ակտիվացնելով ուսանողների և դասախոսների համագործակցությունն ինչպես համալսարանի ներսում, այնպես էլ այլ ուսումնական հաստատությունների միջև:

8) Հետազոտության ոլորտում հաստատել կայուն համագործակցություններ, այդ թվում՝ միջազգային մակարդակում:

9) Մշակել հետազոտական գործունեության միջազգայնացման հստակ քաղաքականություն՝ խթանելով այլ հաստատությունների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումն ու հրապարակումները:

10) Խրախուսել և նպաստել միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրատարակումների քանակի ավելացմանը:

11) Մագիստրոսական և բակալավրական ավարտական աշխատանքները դարձնել առավել արդիական և հետազոտական՝ թեմաները բխեցնելով տարածաշրջանի կարիքներից: Ավարտական աշխատանքները փոխկապակցել պրակտիկաների հետ:

12) Ներդնել համալսարանում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմներ՝ ապահովելով հետազոտական գործունեության արդյունքների ներդրումն ուսումնական գործընթացում:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հետազոտության զարգացման գերակայությունների ցանկը չի ենթադրում, որ հետազոտության այլ ուղղություններ աջակցություն չեն ստանալու: Դրանք բոլորը կարևոր են ինչպես նոր գիտելիքի ձեռքբերման և կուտակման, այնպես էլ ռազմավարական խնդիրների տեսանկյունից:

ԳՊՀ ռեկտոր՝ Արտուշ Ղուկասյան